դին Վահկացին ձեռագրիս սկիզբը ինչպէս նաև իւրաքանչիւր Աւետարանի վերջը ունի յիշատակարաններ, որոց երկուքը ոտանաւոր են. անոնցմէ կը քաղենք ա՛յն կտորները որ կը վերաբերին այս ձեռագրին Ս. Յակոբի վանքին նուիրման և այլ պարագաներու մասին.

«...Տէր Կոստանդինոս ես անպիտան
ընծայեցի զաւետարանս
ի սբ քաղաքս տնաւրինական.
յեէմս պանծական
որ Քի. է գերեզման.
ինձ և իմոց պատճառ յիշման.
որ զմեզ յիշէք միշտ անխափան...
...տր Կոստանդինոս էր վարդապետ
եպիսկոպոս Հայոց պատուեալ
զայս աւետեաց մատեան ստացեալ
եւ Այ. ընծայ տուեալ.
սա յիշատակ բարեաց լիցի
տէր Կոստանդի իւր ստացողի
եւ իւր ծնողաց մարմնաւորի,
եւ իւր որդւոյն պատանեկի
Յակոբ անուանն ցանկալի»
...Մնալ յիշատակ ի տաճարի
որ յարութիւն անուն կոչի.
ի Քրիստոսին գերեզմանի:
ի Գողգոթա խաչին տեղի.
յեէմ մեծ քաղաքի
ի Սբ Յակոբ եկեղեցի...
որ միշտ պահեն յեկեղեցի
վասն յիշելոյ զմեզ ի բարի
եւ թողութիւն մեղաց լինի
ինձ և որդւոյն իմ Յակոբի:
ոչ ոք հանէ սա ի յաստի,
ոչ տայ ի ձեռս անօրինի,
թէ յայլազգեաց ահ մի լինի՝
դընեն պահուստ ի յամրոցի.
կամ ի Կիպրոս կղզին տանի